

Սույն հոդվածը, որոշ կրօնատումներով, տպագրվել է «Դարթակ» շաբաթաթերթում (18 փետրվարի 2004 թ., հմր. 6/33):

Ներքեւի գրությունը ս. թ. հունվարի 22-ին հանձնվել է «Դայաստանի Դանրապետություն» օրաթերթի խմբագրությամբ: Թեեւ վերջինս խոստացել էր այն հրատարակել (թեկուզ կրօնատված տեսքով), այդուհանդեռձ, մինչեւ օրս դեռ լուս չի տեսել: Դրանով «ՀՀ»-ի խմբագրությունը խախտել է ոչ միայն իր խոստումը, այլև՝ ՀՀ-ի օրենսդրությունը, ինչն ստիպում է մեզ սույն գրությունը հրապարակել հայրենական եւ սկյուռքյան մամուլում:

«Դայաստանի Դանրապետություն» օրաթերթի խմբագրությանը,

Խնդրում եմ սույն գրությունը հրապարակել ձեր խմբագրած պարբերականի էջերում՝ համաձայն զանգվածային լրատվամիջոցների մասին ՀՀ գործող օրենքի դրույթների:

Պատասխանի իրավունքով

Շինծու՞, թե՞ իրական պատմություն

«Դայաստանի Դանրապետություն» օրաթերթի 2003թ. դեկտեմբերի 26-ի համարում լուս է տեսել պատմական գիտությունների դոկտորներ, ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուտարյանի, ԵՊՀ Դայոց պատմության ամբիոնի վարիչ Բաբկեն Դարությունյանի եւ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանի համատեղ ստորագրությամբ մի հրապարակում՝ «Խոկական գիտականության եւ հայրենասիրության սահմանները – Մի աղմկահարույց, բայց շինծու պատմության մասին» վերնագրով: Գրությունը վերաբերում է դեկտեմբերի 9-ին, Պատմության ինստիտուտում գործող մասնագիտական խորհրդում Արմեն Այվազյանի դոկտորական ատենախոսությանը սույն խորհրդի տված բացասական գնահատականին ու դրան հաջորդած հրապարակումներին ՀՀ մամուլում:

«ՀՀ»-ի այս հրապարակման մեջ իմ անունն ել է շոշափվում, ինչն ինձ մղում է հանդես գալու որոշ պարզաբանումներով:

Գրության սկզբում, պաշտպանությանը ներկա չեղած ընթերցողներին ապակողմնորոշելու, ավելի շուտ՝ Ա. Այվազյանի ատենախոսության տապալման մասին գրած մարոկանց նկատմամբ բացասական տրամադրվածություն ստեղծելու անթաքույց միտումով, հիշյալ պարոնները գրում են. «Դահլիճը լեփ լեցուն էր լրագրողներով, **քաղաքական ծախողված անցյալ ունեցող «գործիչներով»**, տեսախցիկներով, ատենախոսի օգտին հնչած ամեն մի խորի համար» բուռն ծափահարություններով արձագանքող եւ բացասական կարծիքներ արտահայտողներին՝ զանազան պիտակներով **խարանելու ու անվանարկելու պատրաստակամ** մարդկանցով: **Ինչպես պարզվեց, օրերս զանազան ատյանների հասցեներով գրված եւս մի նյութից՝** դահլիճում տեղ էին գրադեցրել նաեւ **«Մարդու իրավունքների հարցերի հանձնաժողովի»** երեք անդամներ» (ընդգծումներն իմն են,- Գ. Յ.):

1. Ովքե՞ր են այդ «քաղաքական ծախողված անցյալ ունեցող գործիչները»: Եթե ակնարկությունը «Ղարաբաղ» կոմիտեի երբեմնի անդամ, 1990-1995թթ. ՀՀ Գերագույն

խորհրդի պատգամավոր, որոշ ժամանակ նաեւ Գև նախագահության անդամ ու փոխնախագահ, ակադեմիկոս Ռաֆայել Ղազարյանին է, ապա ստորագրողները առնվազն ամոք պետք է զգային նման ակնարկության համար: Ի պատիվ պր. Ղազարյանի, նա ծախու չհանեց իր խիզճը, նախընտրելով վար իջնել քաղաքական Օլիմպոսից, ի տարբերություն շատ-շատերի, որոնց թվում՝ ԵՊՀ եւ Ակադեմիայի համակարգում բոլոր վարչակարգերի եւ բոլոր իշխանությունների ժամանակ երեսի վրա մնացողների: Բոլորը կարող են վկայել, որ ակադ. Ղազարյանը,- որի 80-ամյակը լրանում է հունվարի 26-ին,- ՀՀ-ում քաղաքական անբասիր անցյալ ու ներկա ունեցող հազվագյուտ մարդկանցից է, գիտնական ու քաղաքական գործիչ լինելուց առաջ՝ մեծատառով Մարդ՝ ի տարբերություն շատ ու շատ գիտնականների ու քաղաքական գործիչների:

2. Ստորագրողներն իրենց գումարային վեց աչքերով չեն կարողացել ընդամենը մեկ տեսախցիկը զատորոշել «տեսախցիկներից»: Ով ով, բայց գոնե հինգ ժամ դեմքով դեպի դահլիճը նստած պր. Բարխուդարյանը կարող էր հաշվել տեսախցիկների քանակը:

3. Ներկաները ընդամենը երկու անգամ են ծափահարել, այն էլ՝ Ա. Այվազյանի առաջին երկու պատասխան ելույթներից հետո: Խորհրդային ժամանակների՝ ճառախոսի ամեն մի բառից, նախադասությունից կամ պարբերությունից հետո բուռն, երկարատեւ ծափահարությունների եւ օվագիանների սովոր ու դրանց մասնակցած ստորագրողները այդ օրերը շփոթել են 2003թ. դեկտեմբերի 9-ի հետ:

4. Առնվազն անարգանք է ներկաներին,- գորեթե առանց բացառության՝ գիտնականներ, ասպիրանտներ, ուսանողներ եւ լրագրողներ,- ներկայացնել խառնամբոխի ու խաժամուժի հատկանիշներով: Դա չի համապատասխանում նաեւ իրականությանը:

5. Չափազանց հետաքրքրական ու հատկանշական է «Մարդու իրավունքների հարցերի հանձնաժողովի» ամբողջական անունից «ՀՀ նախագահին առընթեր» հույժ կարեւոր մասի դիտավորյալ գեղջումը: Մեկնաբանումը թողնում եմ ընթերցողներին եւ ... ՀՀ նախագահին: Այս հարցում ավելի մեծ անպարկեշտություն է թույլ տվել պր. Բարխուդարյանը, գրելով, թե հանձնաժողովի անդամների ներկայության մասին իմացել է մի ինչ-որ նյութից: Յիշյալ հանձնաժողովը հենց իրեն՝ պր. Բարխուդարյանին է դիմել դեռեւս հոկտեմբերի 20-ին՝ թիվ Մի-187 նամակով՝ խնդրելով իրեն հայտնել պաշտպանության օրվա մասին, ինչին սույն պարոնը պատասխանել է իր նոյեմբերի 5, թիվ 24-05/515 գրությամբ: Էլ չեմ ասում այն մասին, որ դեմքով դահլիճին հինգ ժամ նայող պր. Բարխուդարյանը ներկաների մեջ պետք է ճանաչեր գոնե հանձնաժողովի նախագահ պր. Յովհաննես Ասրյանին:

Ստորագրողները բոլոր հոդվածագիրներին, որոնց շարքում՝ ինձ, ամբաստանում են «հայինյանքներ ու անհարկի մեղադրանքներ հասցեագրելու» եւ «ազնվություն չունենալու» մեջ:

Պահանջում եմ այս պարոններից՝ իմ հոդվածում («Ազգ», 11 դեկտեմբերի) ցույց տալ թեկուզ մեկ հայինյանք, այլապես ինձ եմ վերապահում նրանց վերաբերյալ համապատասխան պետական մարմիններին դիմելու իրավունքը: Իսկ «անհարկի մեղադրանքներով» ինձ ամբաստանելու փոխարեն, շատ կուգենայի, որ իիշյալ պարոնայք պատասխանեին իմ հաղորդած այն տեղեկությանը, թե նրանցից մեկը փորձել է Այվազյանի դեմ լարել նույնիսկ Մայր աթոռ ս. Եջմիածնին:

Իսկ ազնվության մասին կարծիք հայտնելուց առաջ պետք է ինքնին ազնիվ լինել...

Երեք պատմաբան այրերը հիշեցնում են, որ իմ ու Այվազյանի թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության մասնագիտական խորհուրդների կազմը «մեծ փոփոխություններ» չի ունեցել 2003թ. դեկտեմբերի 9-ի խորհրդի կազմից:

Եթե իմ դեպքում այդ փոփոխությունը կազմել է մոտ 25 տոկոս, նույնը չի կարելի ասել 1992թ.-ին թեկնածուական ատենախոսությունը պաշտպանած Այվազյանի դեպքում. այդ տոկոսը եղել է շատ ավելի: Սա՝ ի միջի այլոց, որպես մի «մանրութ», որը ցույց է տալիս ստորագրողների օբյեկտիվության աստիճանը:

Ստորագրողները Ա. Այվազյանին ու ինձ ամբաստանում են մասնագիտական խորհրդի անդամների, ինստիտուտի բաժինների ու հիշյալ ամբիոնի դասախոսների «գիտական բարձր մակարդակի» նկատմամբ կասկածելու մեջ: Երեւի հիշյալ պարոնայք թույլ են ոչ միայն տեսողությունից ու լսողությունից, այլև՝ հայոց լեզվից եւ/կամ տրամաբանությունից: Իմ հոդվածում ոչ մի տեղ կասկածի տակ չեմ դրել հիշված գիտնականների գիտական (շեշտում եմ՝ գիտական) մակարդակը, այլ՝ կասկածի տակ եմ դրել ու դեռևս շարունակում եմ դնել նրանցից ոնանց բարոյական մակարդակը: Եվ դրա հիմքերն ունեմ ոչ միայն ես: Այլապես, ինչու՞ մասնագիտական խորհրդի մի քանի անդամներ, նաեւ ընդդիմախոսներից ակադեմիկոս Մանվել Զուլայյանը, նաեւ ակադ. Ռ. Ղազարյանը մասնագիտական խորհրդի անդամներին կոչ էին անելու քվեարկել «խողով»...

Դետաքրքրական կլիներ իմանալ, թե ի՞նչ եւ ու՞մ կողմից «բարեխոսություններ» (չակերտը ստորագրողներին է,- Գ. Յ.), ճնշումներ ու սպառնալիքներ են ի գործ դրվել Այվազյանի ատենախոսության «անցկացման» համար: Մի գուցե դրանք պաշտպանությունից հետո կիրառվել են ակադ. Վարդգես Միքայելյանի^o նկատմամբ, որն ընդամենը հաշված ժամերի ընթացքում վերանայեց մասնագիտական խորհրդի կազմից դուրս գալու իր իսկ որոշումը...

Ստորագրողները հիշեցնում են, որ Ա. Այվազյանի 1998թ. հրատարակված, «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. քննական տեսություն» գիրքը,- ուր հեղինակը ջախջախիչ հարված է հասցրել հայոց պատմությունը խեղաքյուրողներին,- «լույս է տեսել Երեւանի պետհամալսարանի հայոց պատմության ամբիոնի եւ պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումներով», եւ քիչ անդին ավելացնում, թե այդ մասին Բ. Հարությունյանի հիշեցումը, «ցավոք, եւս պարզություն շնոցրեց դահլիճում նստածների հիշողության մեջ»:

Ինչպես ասում են՝ ահա՝ այստեղ է թաքնված շան գլուխը:

Նախ ճշտենք. թե այդ մենագրության հրատարակությունը երաշխավորել է ֆակուլտետի գիտական խորհրդությունը, եւ ամբիոնն այստեղ անմիջական առնչություն չունի:

Սեր կողմից, այս առթիվ հիշեցնենք մի քանի այլ փաստեր.

1- Այդ գրքին, թեկուզ շատ ուշացած, ՀՀ պատմագիտական ու հայագիտական կենտրոններից արձագանգեց (այս բառը գրվում է երկու «գ» տառով) միայն ԵՊՀ հայոց պատմության ամբիոնը: Վերջինս, վարիչ, ակադեմիկոս Յրաչիկ Սիմոնյանի առաջարկությամբ, 2001թ. դեկտեմբերի 19-ին որոշում ընդունեց, ուր խստորեն դատապարտվում էին ամերիկյան հայագիտության հակահայկական ու հակագիտական միտումները:

2- Նույն ամբիոնը, գրեթե միեւնույն կազմով, բայց արդեն նոր վարիչով (Բ. Հարությունյան), այսօր ետ է կանգնում երկու տարի առաջ ընդունած իր իսկ որոշումից: Ըստ եռթյան, ամբիոնը ենթարկվում է պահանջներին Հայագիտական ուսմանց ընկերակցության գործադիր նարմնի (ԱՄՆ) 2002թ. հուլիսի 24-ի վերջնագրային ոճով գրված հայտարարության, որն ուղարկվել է ԵՊՀ ռեկտոր, ակադ. Ռադիկ Մարտիրոսյանին՝ ի գործադրություն: Այնտեղ մասնավորապես ասվում է. «Հայագիտական ուսմանց ընկերակցությունը կիուսա, որ հայոց

պատմության ամբիոնը **հետո կոտը** 19 դեկտեմբեր 2001-ի իր **անպատճի** որոշումը եւ փոխարենը **միջոցներ ծեռը կառնե** այս հայտարարության մեջ արտահայտված սկզբունքներն ու նպատակները **համատեղ օանքերով կենսագործելու համար»:** Քիչ անդին ավելացվում է, որ «կղզիացած ու կասկածամտություն ցուցաբերող հայագիտություն մը **դուրս կմղվի միջազգային գիտական ասպարեզեն»» (ընդգծումներն իմն են,- Գ. Յ.): Մի խոսքով, ամերիկան պատվեր է իջեցվում ՀՀ-ի հայագիտության կենտրոնների դեկավարություններին:**

Այդ «համատեղ օանքերի»՝ արդյունավետ գործունեություն սկսելու լավագույն ապացույցը ոչ միայն Ա. Այվազյանի ատենախոսության տապալումն է, այլև՝ ամբիոնի 2003թ. դեկտեմբերի 26-ի նոր կարծիքը կամ ատենախոսության վերաբերյալ իր դեկտեմբերի 3-ի կարծիքի «հիմնավորումը» (երկրորդն ուղղված է բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախագահ պր. Թոշունյանին): Վերջինիս մեջ ամբիոնը իր 2001թ. դեկտեմբերի 19-ի որոշումի մասին գրում է «անկախ այն հանգամանքից, թե որքանո՞վ էր ճիշտ կամ սխալ այն»: Այսինքն՝ ամբիոնը կասկածի տակ է առնում արդեն ... իր խկ ճշմարտացիությունը: Ամոք է, պարոնայք, ամաչեք ներկայից ու պատմության դատաստանից: Արժանահիշատակ Բագրատ Ուլուբարյանն ասում էր. «Մեր ժամանակներում՝ պատմաբանը պետք է զինվոր լինի»: Նմաններին կարելի՞ է զինվոր որակել... Դրական պատասխանի դեպքում՝ միայն դասալիք զինվոր....

- 3- Պր. Հարությունյանն, իհարկե, ոչ ներկաներին, ոչ էլ առհասարակ հայաստանաբնակներին չի հիշեցնում, թե ինչե՞ր է ինք ասում ու գրում արտասահմանում: Օրինակ, նույն ԱՍՍ-ում, պատմաբան Վինսենթ Լինային տված մի հարցազրույցում նա «արժեքազուրկ» է հայտարարում ամբիոնի 2001թ. դեկտեմբերի 19-ի որոշումը, ավելացնելով, որ դա ընդունվել է իր բացակայության այսինքն՝ հասկացնել է տալիս, որ եթե ինք Երեւանում լիներ՝ նաև որոշում թույլ չէր տա ընդունել: Նա «մոռանում է» հիշեցնել նաև իր համահեղինակությանք Մոսկվայում ռուսերեն լույս տեսած «Հայաստան. Ազգային պատմության «ղարաբաղացումը»» վերնագրով հրապարակումը, նաև ակտիվ մասնակցությունը Կարեն Ցուզբաշյանի «Արցախ-Ղարաբաղը որպես պատմամշակութային առանձին երեւությ» ծրագրին, որի տապալմանը մասնակցելու պատիվը ունի տողերս ստորագրողը՝ «շահելով» ազգային արժեքները դոլարային-նյութական չափանիշներով արժեւորող շատ-շատերի ոչ միայն հակակրանքը, այլև՝ կատաղի թշնամանքը...

Ստորագրող պարոնները հայտնում են, որ պաշտոնական ընդդիմախոսներից ակադեմիկոս Մ. Զուլայանը «ատենախոսին ... մեղադրեց իր աշխատություններից օգտվելու ժամանակ հղումներ չկատարելու, այլ կերպ ասած՝ գրագողության մեջ»:

Այստեղ եւս առկա է առնվազն անպարկեշտ մոտեցում. Եթե ոչ բացահայտ գրպարտություն: Իր ելույթում, պր. Զուլայանը բառացիորեն ասել է հետեւյալը. «...16-18-րդ դարերի հայ հոգեւորականության մասին ես խոսել եմ իմ գրքում, բավականին գրել եմ եւ հինա էլ ունեմ շատ նյութեր, որոնք հրապարակված չեն, իմ ձեռքի տակ են, բայց ոչ մի տեղ, ինքն (Ա. Այվազյանը,- Գ. Յ.) ընդունեց իր սխալը, իմ անունս անգամ չի հիշատակվել, բայց դա ինձ չի խանգարում, բոլորովին, պարո՞ն Հարությունյան, իմ խիզճս կորցնել եւ հակառակն ասել, վիրավորել եւ հակառակն ասել, ընդդիմանալ նրան, հասկանու՞մ եք, այդ ձեւով չի կարելի»:

Ինչ խոսք, այդ ձեւով իսկապես չի կարելի: Սակայն, պր. Զուլայանի խոսքի հասցեատերերի մեջ պետք է ավելացնել «ՀՀ»ի-ի հրապարակման մյուս ստորագրողների անունները:

Ի դեպ, ավելորդ չէ հիշեցնել, որ ակադ. Զուլայանն իր ընդիմախոսական կարծիքի մեջ Այվազյանի անգլերեն մեկ մենագրությունը համարում էր ատենախոսության մեկ մասը, իսկ այդ աշխատանքում Այվազյանը կատարել է համապատասխան հղումներ բոլոր աղբյուրներին, այդ թվում նաև՝ ակադ. Զուլայանի հրապարակումներին: Այս մասին պարզաբանում կատարեց Այվազյանը պաշտպանության ժամանակ, որից հետո ակադ. Զուլայանը հայտնեց իր բավարարված լինելու մասին: Ավելորդ չէ այստեղ մեջբերել ակադ. Զուլայանի դիպուկ արտահայտությունը, որը հնչեց նրա երկրորդ ելույթի ժամանակ. «Ես գտնում եմ, որ ետ ձեր ամբիոնը շիտակ, անկեղծ վերաբերմունք չի ունեցել, գիտության առաջ մեղանչել է»:

Իրենց գրության ավարտին, պատմաբան պաշտոնատար այրերը կրկնում են իրենց պատրաստականությունը որեւէ ատյանում «բայց միայն գիտականության շրջանակներում քննության առնել այս հորինածին խնդիրը...»

Այս խնդիրը միայն գիտական խնդիր չէ, պարոնայք, այլ, նախեւառաջ՝ **բարոյականության խնդիր է:** Չետեւաբար, այն հարկավոր է քննարկել նաև այս, այսինքն՝ բարոյական հարթությունում, երբեք չբացառելով՝ գիտական եւ այլ հարթություններուն քննարկումը:

Արմեն Այվազյանի ատենախոսության տապալումն ու դրան հաջորդած զարգացումները բարձրացնում են, իրոք, մի շարք խնդիրներ, որոնց առաջին շարքում՝ հայկական պատմագիտության եւ, առհասարակ, գիտության բարոյականության հոլյժ կարեւոր փիլիսոփայական հարցը, նաև այլ հարցեր, ինչպես՝ հայագիտության զարգացման ուղղվածության, եւ ազգային անվտանգության համակարգում նրա հիմնարար, ռազմավարական նշանակության խնդիրները:

Վերջում ահազանգ եմ հնչեցնում հայությանը ներհակ շահեր ունեցող օտար ուժերը փորձում են ամբողջովին վերահսկելի դարձնել հայկական պատմագիտությունը իր իսկ բնօրրանում՝ Յայաստանի Յանրապետությունում: Այդ փորձերին հակադարձելն ու ավելը շատ չտարածված այն կանխելը ո՛չ միայն հայ (ամեն հայազգի հայ չէ, հայը ՈՐԱԿ է) պատմաբանների գիտական խնդիրն է, այլև՝ ողջ հայ ազգի գոյատեւման խնդրի մի մասն է:

Գեւորգ Յազդյան
(պատմական գիտությունների թեկնածու)